

Նախն Պատկանեան ի Ս. Պ.-բուրդ մալրաքաղաքի, և ի լուս
ընծալեաց նուիրատուութեամբ հարազատ որդին Նախիշևան
քաղաքի, Ստանրապօլաբնակ Առաջին վաճառական բարե-
պաշտ Հալազդի մնջատուն, Գերադնիւ Աղայ Մարգար Բար-
գուղիմէսսեան Փոփովեանց (Տէր Բարդողիմէսսեան) և ւերի-
ցունց նուիրատու առոր Գէորգեան ձեմարանին ո. Աթօռոյն
վշլիածնի, և տպագրեաւ ի Հալրապետութեան Տ. Տ. Գէոր-
գեալդ Վեհ. և սրբ. Կաթողիկոսի ամ. Հալոց, հիմարդի և
կանդնողի ճեմարանին, ի Վաղարշապատ ի ո. Էջմիածին ի
1879 ի փետրվարի 20..

Այս ձեռագիրը դեռ 1879 թ. մարտի 8-ին թուլատրուած
է Ս. Պ.-բուրդի զրաքննչից տպագրութեան համար, բայց մեղ
անլաւտ պատճառով մասցել է անտիպ.

Այդ զործը երեք կաղմի մէջ է ամփոփած և բաղկացած
է 1267 մանրագիր Արեաննիրից, որի մէջ գտնում ենք՝ Անուկ
զաղթի, Ն. Նախիշևանի հիմարգեքի, նորա 100 ամեալ պատ-
մութեան, Յովսէվի և Ներսէս կաթուղիկոսների գործունէու-
թեան ընդարձակ նկարագիրը, Ն. Նախիշևանի բնակիչներից
շատերի տոնմագրութիւնը և վերջապէս իւր՝ հեղինակի ման-
րապատում կենսագրութիւնը:

Մենք կարծում ենք, որ այս է ահա բժ. Քառաքաշի լի-
շած ինքնակնասպրութիւնը:

Այս երկը մնջածախ հատարակութեան դործ լինելով՝
1897 թ. «Լումալի» Բ. գրքում հրաւէր կարդացինք Ն. Նա-
խիշևանցիներին օժանդակել զրքի տպագրութեան, որ մինչև
օրս սական մնում է մեղ օտա անտիպ և որ միան ալդ կեր-
պով կարող է օր առաջ լուս տեսնել:

ԺՈՒԿՈՎԾԿՈՒ ՄԱՀՈՒԱՆ ՑԻՍՆԱՄԵԱԿԸ

Գօգօլի մահուան հարիւրամեակը փառաւորապէս տօնե-
րուց անմիջապէս ինու ամբողջ Ռուսաստանը հանդիսաւոր
կերպով տօնեց իւր մեծ բանաստեղծ Վ. Ա. Ժուկովսկու մա-
հուան լիմնամեակը:

Ժուկովսկին ծնուել է Տուլի նահանգի Միշենսկոյէ գիւ-
ղում 1783 թ. տաճիկ զերուէի մօրից և իւր կնքահօր ազգա-
նունը ստացել ։ Նա իւր սկզբնական դաստիարակութիւնը
ստանում է Տուլի մօղովրդական պարոցում, իսկ 1797 թ. նը-
րուն տեղաւորում են Մոսկուակի համալսարանի պանսիօնում.
այս ժամանակից էլ սկսւումէ նրա գրական գործունէութիւնը.
Ազդաեղ է նա սովորում եւրոպական նոր լեզուները և արքէն
1805 թ. Փրանսերէնից թարգմանում է «Դօն-Քիշօտ Լաման-
շեցու», պատմութիւնը. Վերադառնալով իւր հալրենի գիւղը,
Ժուկովսկին թարգմանում է անզլլ երէնից «Գիւղական գերեղ-

մանաւուն» էլէզիան և դրանով ցոլց տալիս իւր բանագատեզ-
ծական քանքարը։ Տարիներ անցնելուց լետով բանաստեղծը
տեղափոխվում է Մոսկովա և «Ենտառուկ Եվրօլի» հանդիսի
խմբագիր դառնալով՝ ըստ մնձի մասին իւր լողուածներով է
լընում ամսագիրը և մնձ աղջեցութիւն ունենում ժամանակա-
կից ընթերցողների վրայ 1810 թ. Ժուկովսկին թողնում է
խմբագրի պաշտոնը և 1811 թ. հրատարակում է իւր «Տաս-
ներկու քնած աղջիկներու բանաստեղծական վիպասանութեան
առաջին մասը» 1812 թ. բանաստեղծը դինուրական ծառա-
լութեան է մտնում և 1814 թ. գրում է «Տէր, պահեա զկայ-
սըր մեր ոռուսաց ժողովրդական օրհներդը (հիմնը)։ Նուն թը-
շին կամրուհի Մարիա Ֆէօդորովնան ուշադրութիւն դարձնե-
լով բանաստեղծի գրուած քների վրայ Պետերբուրդ է հրաւի-
րում և իրեն համար «ընթերցող» նշանակում նրան։ 1816 թ.
հրատարակում է Ժուկովսկու բանաստեղծութիւնների ժողովա-
ծուն և կամբը տարեկան 4000 ր. թոշակ է նշանակում նը-
րան։ Հետեւեալ տարին նշանակում է մնձ իշխանուհի (և ա-
պա կալարուհի)։ Ալէքսանդրա Ֆէօդորովնայի ոռուսաց լեզուի
ուսուցիչ և ապա զառնում է Ալէքսանդր II Ազատարար թա-
գաւորի մանկութեան դաստիարակը։ 1841 թ. վերջացնելով
ալդ պաշտօնը՝ գնում է Գերմանիա և ամուսնանում իւր վաղե-
մի բայեկամ գնդապես Շէլտէրնի գուտեր հետ։ Անունեան բա-
նաստեղծն ընտանեկան պատճառներով ալ ես հայրենիք չէ
վերադառնում և ամբողջովին նուիրուելով բանաստեղծու-
թեան՝ թարգմանում է գերմաններէնից ոռուսերէն Հոմերոսի «Ո-
դիսականը», Շիլէրի, Գէօթէի բանաստեղծութիւններից շա-
տերը, պարսից լալտոնի «Ռուստէմ և Զոհրաբը»։ Ձեռնարկում
է նունպէս Հոմերոսի «Եղիսականը» թարգմանելու բայց թերի է
թողնում և 1852 թ. ապրիլին վախճանում Բադէն-Բադէնում,
բանաստեղծի երկրացին մացորդները բերում են Ռուսաստան
և հողին պահ տալիս Կարամզինի կողքին։ 1883 թ. լունուա-
րի 29-ին ամբողջ Ռուսաստանը տօնեց իւր սիրելի բանա-
ստեղծ-թարգմանչի ծննդեան հարիւրամնակը։

Ժուկովսկու ամենամեծ ծառալութիւնը ոռուսաց գրակա-
նութեան համար այն եղաւ, որ նա գեղեցիկ լեզուով թարգ-
մաննեց գերմաններէն և անդիքերէն լեզուններից կլասիկական
բանաստեղծութիւնները, մինչդեռ մինչև ալդ ժամանակ ոռու-
սերը համարեա թէ միայն ֆրանսերէնից էին թարգմանում։
Նա առաւելութիւն էր տալիս ումանափական գրուած քներին
և ալդ պատճառով իրեն համարում է ումանտիզմի հիմնադիրը
Ոռուսաստանում։

Այս կարճ միջոցում ոռուս երկու նշանաւոր գրողների
մահուան տարեղարձները մեծ շքով կատարելով՝ Ռուսաստա-
նի ամբողջ աղջաբնակութիւնը ոգնուրում է գեղեցկի ու ճշշ-
մարտի գաղափարով։ Նոր սկրունդը լարդելով հների լիշտա-
կը՝ որոշ ձգտումն է ցոլց տալիս նրանց քարոզած գաղափար-

ներն իւրացնելու և կատարելագործելու կատարելագործութեան ձգոմանը է արտաբաւում մարդկալին հոգու կենսունակութիւնը և լարատն կարունութիւնը:

Խօմանափիկ չիշլալին հետևելով և միննոյն ժամանակ բարեպաշտ լինելով՝ ժուկովսկին իդէալին հասնելն անկարելի էր համարում աս աշխարհում. կեանքի մէջ կարծես ներկան գութիւն չունի նրա համար, ալ իսկական կեանքն անցեալի և ապագալի մէջն է, նրա կարծիքով «քրիստոնէութիւնը բանալով մեր հոգ խորքերը» գրաեց մեզ դէպի հոգեկան աշխարհը, արտաքին աշխարհի հետ կապակցեց սերքին աշխարհը, որ և արտացօլաց իրական բանաստեղծութեան մէջ»: Բանաստեղծութիւնը ձգտուլով կապակցութեան հոգի ներշնչել ալդ երկու աշխարհներին, ինքն էլ կրօնական է դառնում: ալդ պատճառով և ծուկովսկին ասում է. «բանաստեղծութիւնը երկնալին կրօնի երկրալին քոյրն է»: Բանաստեղծութիւնը պէտք է ազգեցութիւն ունենալ ժողովրդի դաստիարակութեան, նրա հոգեկան կեանքի վրայ Բանաստեղծական ողեռութիւնն երկնալին պարզ է, Ահա ալս գաղափարները բանաստեղծութեան նշանակութեան մասին նորութիւններ էին ոռւսաց զրականութեան համար:

ՂԱԶԱՐՈՍ ՍՂԱՑԵԱՆԻ ԳԱՌԱՍՍՆԱՄՄԵԱՅ ԳՈՐԾՈՒՆՔՈՒԹԵԱՆ ԱՌԹԻՒ

Ամռուս 19-ին Թիֆլիսի հալ գրագէտների դասը տօնեց լայտնի մանկական գրող պ. Ղ. Աղակեանցի գրական գործունէութան քառասնամեակը.

Աղակեանցը ծնուել է 1840 թուին Թօլինս Խաչէն գիւղում և իւր ուսումը ստացել է Ներսիսեան Դպրոցում: անունետեւ նա սկսեց գրաշարութիւն անել Հ. Էնֆիանեանցի տպարանում և շարում էր «Կոռունկ» ամսագիրը, որով և օրական հացը վաստակում: բայց և միաժամանակ ինքնակրթութեամբ աշխատում էր աւելացնել իւր մոռաւոր պաշարը».

Գրաշարութիւնը շարունակեց նա մինչև 1862 թուականը և ալդ թուին հրատարակեց նա իւր անդրանիկ բանաստեղծութիւնը «Մեղու Հարաստանի» լրագրում, որի եռանդրոն աշխատակիցը դառաւ նա հօթանասնական թուականներին:

Միշտ լառաջադիմելու ձգտումով՝ ալդ թուին նա գնաց Ռուսիաի մարդաքաղաքը, ուր մի կողմէց ինքնակրթութեամբ զարգանում էր, իսկ միւս կողմէց գրաշարութեամբ պարապում: 1867-ին վերադարձաւ նա Թիֆլիս և հրաւիրուեց Լջմիածին իրբն տպարանի կառավարիւ ուր ապա վարեց «Արարատի» խմբսպի պաշտօնը: Այնուհետեւ Աղակեանցը նուիրուում է ու-